Նոյնին յուշագրութեան համաձայն, Ապու Տահապ՝ նոյն օրը Ցոպպէ կը մտնէ, բնակիչները թրէ կ'անցընէ, Հայոց Ցունաց և Լատինաց վանքերը կը կործանէ և կը կողոպտէ և կրօնաւորներ ալ կը կոտորէ. ըստ աւանդութեան՝ Հայոց վանքի տեսուչ Մինաս վրդ՝ պատարագած ժամանակ սեղանին առջև նահատակուած է. սպանութիւններ կատարուած են նաև Ռէմլէի մօտերը, (ԺՊԵ. Բ. հատ. էջ 106-7)։

ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ. ՍՐԵՒԵԼՑԻ Մբ.—ՏԴ. 1773ին, ՏԲ. 1781ին։

ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ. ԿԱՑՇԱԿՆ, ԱՄԱՍԻԱՑԻ կամ ՋԷՅԹՈՒՆՑԻ Մբ.— Մինաս Ամգեցի պարք.ին աթոռակից (1695-1701). Ս. Յակոբի մէջ կը պաշտօնավարէ Ղափանցի Եփրեմ պարք.ի հրամանով (1694-1698)։ Գալուստ վրդ. Եւդոկիոյ առաջնորդութենէն հրաժարելով՝ բ. անգամ կը վարէ Ս. Յակոբի պատրիարքութիւնը, 1702ին։ 1704ին Պոլսոյ մէջ հրատարակած է Լուսաշաւիղ անուն գիրքը. որուն յիշատակարանին համաձայն սրբազրութիւնը և տպագրութիւնը կատարած է Ս. Յակոբի միաբան Թոխատցի Սարգիս վրդ. ատաքնի։

ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ. ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ.—(Նորչէն գիւղէն), ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, այս այցելութիւնը 1720էն վերջ կատարած կրնայ ըլլալ, վասնզի 1720ին տպագրուած Վարք Հարանց գրքին սկիզբը, Գալուստ վրդ. կը գրէ ոամկօրէն և տառասխալ ոտանաւոր մը աշխարհի ունայնութեան վրայ, տեղ տեղ աւրուած և անընթեռնելի։ Ի միջի այլոց կը գրէ հետեւեալը՝

«Գալուստ անմիտ ի միտ առ.
գրած քոյ բանդ դաս առ.
մարմնոյդ բնաւ թուլ մի՛ տալ,
Ախկատ հոգուդ արա ճար».

ԳԱԼՈՒՍՏ ՎՐԴ. ՇԱՄԲԵՑԻ, (Գողթն).—Մբ. Նախավկայի վանքին, Դաւրիժի Մատենադարանին թ. 6 և ՌԿԳ (=1614) թուականաւ գրուած ժողովածուին երկրորդ յիշատակարանէն կը հասկցուի թէ Գալուստ վրդ. ՌՃԽԶ (=1697) այցելած է Ս. Յակոբի վանքը, նոյն յիշատակարանին կարեւոր մասը հոս կ'ընդօրինակենք, Գալուստ վրդ. իր Քարոզգիրքը Նախավկայ վանքին